ՏԵՂԵԿԱՆՔ

Հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրով նախատեսված և ՀՀ ԿԱ ՄՊԿ պատասխանատվության շրջանակներում գտնվող աշխատանքների կատարողականի վերաբերյալ

1. Ծրագրի 4.12 կետը նախատեսում է մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային մարմինների տեխնիկական հագեցվածության բարելավում (մաքսային զննման վայրերի ստեղծում) և դրա հետ կապված մաքսային օրենսդրության լրամշակում:

Այս միջոցառումների իրականացումը կապված է ֆինանսական մեծ միջոցներ ներդնելու հետ (մոտավոր հաշվարկներով՝ 60-65մլն. ԱՄՆ դոլար), ինչը հնարավոր չէ իրականացնել ոչ մաքսային մարմինների համակարգի զարգացման և նյութական խրախուսման ֆոնդի և ոչ էլ պետական բյուջեի միջոցների հաշվին: Ներկայումս աշխատանքներ են տարվում դոնոր կազմակերպություններ գտնելու ուղղությամբ, որոնք կապահովեին համապատասխան ֆինանսավորումը: Մասնավորապես. ՀՀ ԱԳՆ-ի միջոցով շուրջ 65մլն. ԱՄՆ դոլար արժողությամբ հայտ է ներկայացվել մեծ ութնյակի երկրների նախաձեռնած «Համաշխարհային գործակցություն ընդդեմ զանգվածային ոչնչացման զենքերի ու նյութերի տարածման» գործընթացի շրջանակներում Հայաստանի Հանրապետությանը մաքսային զննման նորագույն սարքավորումներ հատկացնելու համար:

Սակայն, վերոհիշյալ խնդիրը լուծելուն նպատակաուղղված աշխատանքները չեն սահմանափակվում միայն դոնոր կազմակերպությունների փնտրտուքով. աշխատանքներ են տարվում նաև առկա հնարավորությունների սահմաններում մաքսային մարմինների տեխնիկական հագեցվածության խնդիրը լուծելու ուղղությամբ: Մասնավորապես.

- բոլոր մաքսակետերում, բացառությամբ երկուսի, տեղադրվել են ծանրաքաշ էլեկտրոնային հիշողություն ունեցող ծանրաքաշ բեռնային կշեռքներ, որոնց էլեկտրոնային հիշողությունը զրոյացնում է կշեռքի հետ կապված չարաշահումների հավանականությունը:

- շուտով շահագործման կհանձնվի մաքսային հատուկ պահեստը, որը նախատեսված է լինելու 100%-ով զննման ենթակա բեռների մաքսային հսկողության համար (պահեստն ունի բավարար տեխնիկական հագեցվածություն),

- ԱՄՆ արտահանման վերահսկման և սահմանների անվտանգության ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարությանն են հանձնվել բեռների զննման 1 և ուղեբեռների զննման 6 ռենտգենահեռուստատեսային ներսադիտակներ (սկաներներ), որոնք տեղադրվել են Զվարթնոց մաքսատանը, Մեղրու մաքսային կետում և Ծիրակ օդանավակայանի մաքսային կետում,

Նշենք նաև, որ 2005թվականին մաքսային հսկողության արդյունավետության բարձրացման նպատակով մաքսային մարմինների տեխնիկական հագեցվածության բարելավման համար ՄՊԿ բյուջեում նախատեսված է 500 մլն. դրամ:

Ինչ վերաբերում է մաքսային հսկողության համակարգի տեխնիկական բարելավման արդյունքում ստեղծվելիք հնարավորություններին համապատասխան մաքսային օրենսդրության լրամշակմանը, ապա այդ աշխատանքները կարող են իրականացվել միայն տեխնիկական հագեցվածության խնդիրը հիմնովին լուծելուց հետո, քանի որ հակառակ պարագայում մաքսային հսկողության համակարգը միասնական չի լինի՝ տարբեր տարածաշրջաններում, տարբեր մաքսային մարմիններում անհրաժեշտ կլինի ներդնել տարբեր համակարգեր (հաշվի առնելով կոնկրետ մաքսային մարմնի տեխնիկական հագեցվածությունը), ինչի արդյունքում նախ կբարդանա և կծանրաբեռնվի օրենսդրական դաշտը, և երկրորդ կառաջանան տարբեր մաքսային մարմինների միջև մաքսային հսկողության հետ կապված խնդիրների համակարգման, այդ խնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների ներդաշնակեցման բարդություններ:

2. Ծրագրի 4.13 կետը նախատեսում է մաքսային մարմինների միջև ընդհանուր կապ ապահովող ցանցի ներդրում և մաքսային օրենսդրության և ընթացակարգերի վերանայում՝ հաշվի առնելով ընդհանուր կապի ընձեռած հնարավորությունները:

Մաքսային մարմինների միջև ընդհանուր կապ ապահովող ցանցն արդեն ստեղծված է (ներկայումս աստիճանաբար ընդլայնվում են ցանցի օգտագործման շրջանակները), սակայն մալուխային ցանցի մաշվածությունը թույլ չի տալիս ապահովել ինֆորմացիայի փոխանակության բավարար ծավալներ և արագություն՝ հայտարարագրման գործընթաց ապահովելու համար: Նախատեսվում է, որ ընդհանուր կապի լիարժեք գործարկումից հետո հաջորդ քայլը լինելու է հայտարարատու-մաքսային մարմին շփումը սկզբունքորեն նոր հարթություն տեղափոխելու համար օրենսդրական հնարավորության ստեղծումը, ինչը թույլ կտա

հայտարարագրումն իրականացնել առանց անմիջական շփման՝ էլեկտրոնային կապուղիներով:

Ներկայումս ՀՀ ԿԱ ՄՊԿ ուսումնական կենտրոնում կազմակերպված դասընթացների շնորհիվ ԱՏԳ խոշոր մասնակիցներին և մաքսային միջնորդական գործունեություն իրականացնողներին հնարավորություն է տրվել մաքսային հայտարարագիրը ներկայացնել էլեկտրոնային կապուղիներով, բացի այդ մաքսային ձևակերպումների իրականացման վայրերում տեղադրվել են համակարգիչներ, որոնց միջոցով հայտարարատուները կարող են ինքնուրույնաբար լրացնել մաքսային հայտարարագիր:

Ինքնահայտարարագրման համակարգի բարելավման համար Արարատյան և Միջազգային ճանապարհային փոխադրումների մասնագիտացված մաքսատներում ներդրվել է ծրագրային համակարգ, որը թույլ է տալիս ապրանքների և տրանսպորտային միջոցների նախնական հայտարարագրումն իրականացնել մաքսային միջնորդական գործունեություն իրականացնող և ԱՏԳ որոշ մասնակիցների գրասենյակների տարածքներից: Կապը իրականացվում է հեռախոսային գծերի միջոցով: Այսօրվա դրությամբ 8 կազմակերպություններ կարող են իրականացնել նախնական հայտարարագրում իրենց գրասենյակների տարածքներից:

3. Ծրագրի 4.14 կետը նախատեսում է մաքսային ընթացակարգերի հրապարակայնության, իրազեկության կատարելագործում՝ մաքսային ձեռնարկի պատրաստում:

Այս միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

3.1. ստեղծվել է ՀՀ ԿԱ ՄՊԿ պաշտոնական ինտերնետային էջ (www. customs.am) որում տեղակայված է մաքսային ընթացակարգերին (օրենսդրությանը) վերաբերող ընդարձակ տեղեկատվություն.

3.2. 2003-2005թթ. ընթացքում ՀՀ ԿԱ ՄՊԿ-ն, Բերինգ Փոյնթ կազմակերպության և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ, կազմակերպել է հետևյալ տեղեկագրերի (բրոշյուրների, ժողովածուների) հրապարակումը (նաև վերահրապարակումը՝ հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունները).

- Մաքսային ծառայության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրական ակտերի ժողովածու.

- Մաքսային տեղեկագիր արտաքին տնտեսական գործունեության մասնակից կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար (հայերեն և անգլերեն տարբերակներով).

- Մաքսային տեղեկագիր ուղևորների և ֆիզիկական անձանց համար (հայերեն և անգլերեն տարբերակներով).

- Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ) մաքսային արժեքի որոշման համաձայնագրի և ՀՀ մաքսային օրենսգրքի 4-րդ բաժնի դրույթները (հայերեն և անգլերեն տարբերակներով):

- Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման համար վճարվող պարտադիր վճարները.

- Առևտրի Համաշխարհային Կազմակերպության առևտրաքաղաքական գործիքները և Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ազատականացման նշանակությունը.

- Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների դասակարգման սկզբունքները.

- Հայաստանի Հանրապետության անունից կնքված մաքսային բնագավառում համագործակցության և փոխօգնության մասին համաձայնագրեր:

Մաքսային վարչարարության կատարելագործման, մաքսային արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև մաքսային սահմանը հատող անձանց իրազեկվածության և նրանց հետ հետադարձ կապի ապահովման նպատակով ՀՀ ԿԱ ՄՊԿ-ի նախագահի հրամանով բոլոր տարածաշրջանային մաքսատների և մաքսային կետերի տեսանելի վայրերում (ինչպես նաև ՀՀ ԿԱ ՄՊԿ կենտրոնական ապարատի շենքում) տեղադրվել են «ՀՀ ԿԱ ՄՊԿ-ի նախագահին հասցեագրված բողոքների և առաջարկությունների արկղեր»: Այդ արկղների միջոցով հնարավոր կլինի տեղեկատվություն ընդունել մաքսային սահմանի հատման, մաքսային ձևակերպումների ընթացքում ծագող հնարավոր տարաձայնությունների, ինչպես նաև մաքսային ծառայողների գործողությունների վերաբերյալ: Արկղերը բացելու և փակելու իրավասությունը վերապահված է միայն ՀՀ ԿԱ ՄՊԿ-ի նախագահի կողմից լիազորված անձանց:

դ) Ծրագրի 4.14 կետը նախատեսում է արտահանողների համար արտահանման թույլտվությունների ընթացակարգերի պարզեցում և պահանջվող փաստաթղթերի թվի կրճատում:

Մաքսային մարմիններում 2004 թվականի ընթացքում սկսվեց մաքսային միջնորդական գործունեություն իրականացնող անձանց և արտաքին տնտեսական գործունեության որոշ մասնակիցների համար ինքնահայտարարագրման (մաքսային հայտարարագիրն ինքնուրույնաբար լրացնելու) համակարգի ներդրումը: Մասնավորապես՝ նշված անձանց համար 2004թ. IV եռամսյակում կազմակերպվեցին ԱՍԻԿՈՒԴԱ ավտոմատ համակարգչային ծրագրի դասընթացներ, մաքսային ձևակերպումների իրականացման վայրերում ինքնահայտարարագրման համար առանձնացվեցին հատուկ համակարգիչներ: Ներկայումս ինքնահայտարարագրման նշված եղանակով մաքսային ձևակերպումներ են իրականացնում մոտ 400 մաքսային բրոքերներ (միջնորդներ) և արտաքին տնեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներ: Նրանց լիազոր ներկայացուցիչները մասնակցել են ԱՍԻԿՈՒԴԱ ավտոմատ համակարգչային ծրագրի դասընթացներին և ստացել համապատասխան վկայագրեր:

Ինչ վերաբերում է պահանջվող փաստաթղթերի թվի կրճատմանը, ապա հայտնում եմ, որ 2003թ. նոյեմբերի 21-ին արդեն իսկ ընդունվել է ՀՀ կառավարության «Մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ու տեղեկությունների ցանկերը և դրանք մաքսային մարմիններին տրամադրելու կարգը սահմանելու մասին» թիվ 1779-Ն որոշումը, որով ուժը կորցրած ճանաչվեց ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 15-ի թիվ 413 որոշումը (որով նախկինում սահմանված էին այդ ցանկերը), և կրճատվել է մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

ե) Ծրագրի 4.16 կետը նախատեսում է մաքսային օրենսդրության կատարելագործում՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից: Այդ կապակցությամբ 2004թ. IV եռամսյակում ընդունվել է ՀՀ ԿԱ ՄՊԿ կողմից մշակված «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը, որոնք 2004թ. դեկտեմբերի 24-ին ընդունվել են ՀՀ Ազգային Ժողովի կողմից:

Մաքսային ընթացակարգերի պարզեցման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից 2005թ. ընթացքում ՀՀ կառավարություն, այնուհետև ՀՀ Ազգային Ժողով են ներկայացվել օրենքների նախագծեր: Մասնավորապես.

1.1. «ՀՀ Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով խստացվում է մաքսանենգության որակումը՝ ակցիզային դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման ենթակա ներմուծվող ապրանքների մասով.

1.2. ««Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով հստակեցվում է մաքսային ծառայության գլխավոր և առաջատար թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող փակ մրցույթի մասնակիցների շրջանակը.

2. Մշակվել և ՀՀ կառավարության կողմից արդեն իսկ ընդունվել են թվով 8 ՀՀ կառավարության որոշումներ, մասնավորապես.

2.1. «Մաքսային մարմինների տեղակայման վայրերը և տարածաշրջանային մաքսատների ու մաքսային կետերի գործունեության տարածքները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.

2.2. «Մաքսային մարմինների կողմից իրականացվող՝ օպերատիվ-հետախուզական գործունեության հետ կապված այն պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին, որոնցում նշանակումները կատարվում են առանց մրցույթի՝ վերադաս մաքսային մարմնի ղեկավարի կողմից» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.

2.3. ««Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով դրոշմավորման մասին» ՀՀ կառավարության որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.

2.4. ««Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «ժամանակավոր ներմուծում», «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» և «ժամանակավոր արտահանում» ռեժիմներով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նույնականացման իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և այլն: